ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. փետրվարի **18 -ին կայացրած նիստի**

Նիստի մասնակիցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Անի Հարությունյանի դիմումն ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ պետպատվերի շրջանակներում MRT հետազոտություն անցնելու համար ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

<u>ՈՐՈՇԵՑ</u>

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրա ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Եղեգնաձոր քաղաքի բնակչուհի Անի Հարությունյանի հետազոտությունը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի /թիվ 7/ միջնորդագիրն ուղղված ՀՀ առողջապահության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան